

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆ. ԻՆՔՆԱՏԻՊ ԳՐՈՂԸ, ԳԵՂԱԳԵՏԸ, ՄԱՆԿԱՎԱՐԺԸ*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանալի բառեր՝ Թովմաս Թերզյան, մանկավարժ, բանաստեղծ, թատերագիր, գեղագետ, թարգմանիչ:

Ամփոփում

Թովմաս Թերզյանը XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ մտավորականության անվանի դեմքերից է: Հիմնական կրթությունը ստացել է ժամանակի համալսարանում՝ հայկական կրթության մեկուսի վեներիկի Մխիթարյան միաբանության Մուրատ-Ռափայելյան վարժարանում: Նշանավոր ուսուցիչների՝ Ղևոնդ Այիշանի, Արսեն Բագրատունու և այլոց հոգատար հայացքի ու հսկողության ներքո նա վաղ տարիքից ձևավորվել է որպես ազգային ու համաշխարհային դասական և արդիական արժեքների կրող, բազմակողմանի մտածողության ու հարուստ ներաշխարհի տեր անհատականություն: Կ. Պոլսում մի քանի տասնամյակ զբաղվել է մանկավարժությամբ՝ պատրաստելով բարձրակարգ գրական, կրթական ու մշակութային սերունդներ, որոնցից շատերը հետագայում լրացրել են հայ մտքի երախտավորների շրջանակը:

Հայոց գրականության պատմության մեջ Թ. Թերզյանը հայտնի է որպես նրբին զգացողությունների տեր բանաստեղծ, ազգային թատրոնի ստեղծման ակունքների մոտ կանգնած թատերագիր, հմուտ գեղագետ, տաղանդավոր թարգմանիչ:

Նախաբան

Թովմաս Թերզյանը ծնվել է 1840 թ. հոկտեմբերի 21-ին, Կ. Պոլսի Բերա թաղամասում: Նախնական կրթությունը ստացել է 1850–1851 թթ. տեղի Սազըզ-Աղաճի մխիթարյան վարժարանում: Ժամանակակիցների վկայությամբ՝ նկատելով նրա բացառիկ կարողությունները՝ Մխիթարյան Հայրերը որոշում են նրան մի քանի այլ խոստումնալից պատանիների՝ հետ ուղարկել վեներիկի

* Ներկայացվել է 13. IX. 2025 թ., գրախոսվել է 30. IX. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

¹ Հետագայում անվանի բանաստեղծ Մկրտիչ Աճեմյան, լուսանկարիչ Գևորգ Ապտուլլահ (Ապտուլլահյան), թատերգակ, մանկավարժ Սրապիոն Թյլյան և այլք:

Մուրատ-Ռափայելյան վարժարան: Միաբանության այդ համբավավոր վարժարանում ուսանելու տարիներին (1852–1858) նրա ուսուցիչներն էին հայագիտության, հայոց լեզվի ու գրականության այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք էին Ղևոնդ Ալիշանը, Արսեն Բագրատունին, Էդուարդ Հյուբերտյանը:

1858-ին Կ. Պոլիս վերադառնալուց հետո Թ. Թերզյանը զբաղվել է մանկավարժությամբ, գրական-մշակութային ակտիվ գործունեությամբ՝ հատկապես թատերական, գրական, գեղագիտական և թարգմանական ասպարեզներում: 1874 թ. ամուսնացել է պոլսահայ անվանի մտավորական Հովհաննես Սաբր-յանի քրոջ դստեր՝ Սաթենիկ Սոֆյայանի հետ: Ունեցել է չորս զավակ՝ Լևոն (որին, ըստ Ռուդոլֆ Սամիկյանի (Տոմինո), այդպես է անվանակոչել սիրելի ուսուցչապետի՝ Ղ. Ալիշանի բաղձանքով²), Էդուարդ, Հրանտ և Արման:

Թ. Թերզյանի կյանքը, սակայն, այնքան էլ հարթ չի ընթացել, մինչև անգամ գերծ չէր ողբերգական իրավիճակներից: 1870 թ. Բերայի հրդեհին զոհ է դարձել հայրը, 1903-ին մահացել է 16-ամյա որդին՝ Արմանը: Մինչ այդ օսմանյան կառավարության կողմից հարուցված արհեստական արգելքների ու բռնադատությունների պատճառով իր սիրած բոլոր ասպարեզներից գրեթե մեկուսացած Թերզյանը շատ ծանր է տանում որդու կորստյան ողբերգությունը: Մի քանի տարի անց որոշ ժամանակ կորցնում է խոսելու կարողությունը, կուրանում է աչքերից մեկը, 1909-ին կաթվածահար է լինում: Որդու՝ Էդուարդ Թերզյանի վկայությամբ՝ «Չէր կրնար ոչ գրել, ոչ կարդալ. օրիորդ մը կուգար ամէն օր իրեն ընթերցումներ ընել ու մանաւանդ իր բանաստեղծութիւններն օրինակել ձեռագիրներու վրայէն և իրեն կարդալ՝ որպէս զի բերանացի իր դիտողութիւններն ու սրբագրութիւններն ընէր»³: Մահը վրա է հասել 1909-ի փետրվարի 8-ին:

XIX դարում ժամանակի աշխարհաքաղաքական և գիտամշակութային նոր զարգացումներով պայմանավորված, արևմտյան մտածողության ներմուծումը հայ գրական-մշակութային մտքի համակարգ նոր թափ է ստացել: Այդ գործում արևելահայ ու արևմտահայ նշանավոր այլ գործիչների շարքում մեծ է նաև Թերզյանի դերը: Մի քանի տասնամյակի ընթացքում նա անհատական ինքնատիպության պահպանմամբ ծավալել է վիթխարի գործունեություն ժամանակի արևմտյան գիտական, գեղարվեստական մտքի նվաճումները հայ իրականությանը ներմուծելու ուղղությամբ՝ որոշակի հող նախապատրաստելով հաջորդ հարյուրամյակի հայ գրական-գիտական-մշակութային մտքի զարգացման համար:

Մանկավարժը

Կ. Պոլիս վերադառնալուց հետո Թ. Թերզյանն ընտրել է մանկավարժության ասպարեզը՝ սկսելով մասնավոր դասատվություններից: Հայտնի է, օրինակ, որ ապագա ճանաչված բանաստեղծուհի Անայիսը (Եվփիմե Ավետիսյան) «հայերենը կատարելագործելու համար մասնավոր դասեր է վերցրել բանաստեղծներ Թովմաս Թերզյանից և Խորեն Նար Պեյից»⁴: Այնուհետև ուսուցչություն է արել Կ. Պոլսի Ներսիսյան, ապա Նուպար-Շահնազարյան վարժարաններում: Տիրապետելով մի շարք լեզուների (չին հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, իտա-

² Ս ա մ ի կ ե ա ն. 1909, 137:

³ Թ է ր զ ե ա ն. 1929, ԻԹ:

⁴ Ս տ ե փ ա ն յ ա ն. 1973, 91:

լերեն, անգլերեն)՝ դասավանդել է հայերեն, ֆրանսերեն, ինչպես նաև գրականություն: Ընդ որում, արևմտահայ դպրոցում գրականության դասավանդումն էլ որպես առանձին առարկա Թերգյանն է սկսել, մի բան, որ, ինչպես նշում է Գր. Զոհրապը, 1890-ական թվականներին անգամ «... նորութիւն մըն է եւ որ քսան տարի առաջ ճշմարիտ հերձուած մըն էր անդրդուելի հայկաբաններու սերունդին մէջ»⁵: 1886 թ. Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի բացումից հետո, մանկավարժական գործունեությունը շարունակում է այդ կարևոր ուսումնական հաստատությունում՝ դասավանդելով ֆրանսերենից հայերեն թարգմանություն և գեղեցկագիտություն: Ի դեպ, վերջինը՝ որպես առանձին առարկա, նույնպես նորություն էր:

Մի քանի տասնամյակ տևած մանկավարժական գործունեության ընթացքում Թ. Թերգյանին աշակերտել են հետագայում ազգային, գրական, հրապարակագրական, գիտական այնպիսի հայտնի դեմքեր, ինչպիսիք են Եղիա Տեմիրճիպաշյանը, Մինաս Զերազը, Գրիգոր Զոհրապը, Ռեթեոս Պերպերյանը, Տիգրան Արփիարյանը, Հրաչյա Աճառյանը, Արշակ Չոպանյանը և ուրիշներ: Գրեթե բոլորն էլ մեծագույն պատկառանքով են խոսել իրենց անվանի ուսուցչի մասին: «Ուսուցիչը որ եղաւ Թէրգեան՝ այնքան մեծ էր որքան բանաստեղծը, — գրում է Ա. Չոպանյանը: — Այն դերը զոր Պէշիկթաշեան կատարեց՝ ընտանիքներու մէջ, Թէրգեան զայն՝ բազմաթիւ տարիներ՝ կատարած է մեր ազգային վարժարաններուն մէջ՝ նոյնքան ձեռնհասութեամբ, եւ աւելի լայն արդիւնաւորութեամբ: Մէկէ աւելի հայ սերունդներ իրմէ սորված են սիրել, ըմբռնել, ճաշակել գեղարուեստն ու գրականութիւնը»⁶: Տիգրան Արփիարյանը մեծագույն երախտագիտութեամբ է նշել, որ Օրթագյուղի Թարգմանչաց վարժարանում Գ. Զոհրապի հետ սովորելու տարիներին, հայկաբանության ուսուցիչ Թերգյանը նաև «կը քաջալերէր գրելու հակում ունեցողները»՝ խոստովանելով, որ «եթէ Գ. Զոհրապ գրագէտ եղաւ ու ես ալ հրապարակագիր, մեր նախաքայլերուն առաջնորդողը, մեր մատաղ մտքերուն ներշնչողը Թէրգեան ինքը եղաւ»⁷:

Ըստ արվեստաբան Սամվել Իսկանդարյանի՝ Թերգյանի անվան հետ է կապվում ընդհանրապես «մանկավարժական առաջավոր գաղափարների տարածման սկիզբն արևմտահայ իրականության մեջ»⁸: Մխիթարյանների և մանավանդ Ղ. Ալիշանի գաղափարների ու կողմնորոշումների ազդեցությամբ՝ Թերգյանն ընդառաջ գնաց XIX դ. երկրորդ կեսին եվրոպայում ծայր առած գրական-մշակութային արդիական զարգացումներին: Այդ «գրական յեղաշրջումը արդիւնքն էր ռամկավարական գաղափարներու տարածումին, — գրում է Մխիթարյան անվանի Հայրերից, հայագետ, գրականագետ Մեսրոպ Ճանաչյանը, — որ Ֆրանսայէն անցաւ ուրիշ երկրներ: Ժողովուրդը կ'ուզէր իր բաժինը բերել մշակութային եւ ընկերային բոլոր մարգերուն մէջ: ... Այս ընդհանուր շարժումին մասնակցեցաւ նաեւ հայ ժողովուրդը՝ մեր զոյգ համայնքներու մէջ, — արեւմտահայ եւ արեւելահայ, — շնորհիւ Եւրոպայի մէջ բարձրագոյն կրթութիւն ստացած գրական սերունդի մը»⁹: Ըստ նրա՝ Մկրտիչ Պեշիկթաշյանը,

⁵ Զ ո հ ր ա պ. 1892, 261:

⁶ Զ ո պ ա ն ե ա ն. 1909, 38:

⁷ Ա ը փ ի ա ը ե ա ն. 1908, 731:

⁸ Թ ե ը յ ա ն. 1992, 5:

⁹ Ճ ա ն ա չ ե ա ն. 1973, 46:

Գրիգոր Օտյանը, Նահապետ Ռուսինյանը, Միքայել Նալբանդյանը, Թովմաս Թերզյանը և ուրիշներ «... նոր դէմքեր էին՝ որոնք իրենց հետ կը բերէին եւրոպական լուսաւոր քաղաքակրթութեան մը բարիքները, գրական նոր գաղափարներ, արուեստ, մշակոյթ, ծաւալելու համար զանոնք իրենց ազգակիցներուն մէջ: Այս սերունդը կոչուեցաւ զարթօնքի սերունդ»¹⁰:

Գեղեցիկի, ներդաշնակութեան, մաքուր ու նուրբ զգացումների նկատմամբ իր սերը ևս Թերզյանի մեջ ավելի ծավալ ու թափ է ստացել արեւմտյան գեղագիտական ուսմունքներին տիրապետելու հետ, որոնք նա մեծագույն հմտութեամբ փոխանցում էր հայ նոր սերնդին: Դրա լավագույն ապացույցն են գեղեցկագիտութեանը նվիրված նրա դասախոսութիւնները Կ. Պոլսի մի շարք կրթական հաստատութիւններում և, մասնավորապէս, Կեդրոնական վարժարանում:

Գեղեցկագիտական հայացքները

Թ. Թերզյանի գեղեցկագիտական հայացքները հիմնականում ամփոփված են մի քանի տարիների ընթացքում ժամանակի պարբերականների շարունակական համարներում լույս տեսած երկու ծավալուն հոդվածներում՝ «Բանաստեղծութիւն» («Մասիս» լրագիր, 1865) և «Գեղեցկագիտութիւն» («Բազմավեպ», 1897–1901): Ըստ էութեան, դրանք հմուտ ու սիրված մանկավարժի՝ ավելի քան երեսնամյա շրջանի դասախոսութիւնների խմբագրված տարբերակներն են:

Առաջին ու ամենակարևոր երևույթը, որ առաջադրում և փորձում է վերլուծաբար ներկայացնել Թերզյանը, բանաստեղծութեան կամ քերթութեան բուն էութիւնն է: Իր պատկերավոր ձևակերպմամբ՝ «Քերթութիւնը իր սկզբնատիպ մերկութեանը մէջ՝ ինչպէս որ մարդկային մտքէն կամ սրտէն բղխելով, նման Աթենասայ Արամազդու ըղեղէն»¹¹: Առաջադրված խնդրի բացահայտման համար նա դիմում է մագնիսի և նրա ձգողական ուժի վերաբերյալ պատմության մեկնաբանութեան օգնութեանը. «Այն վէմը զոր եվրիպիդէս մագնիսական կը կոչէ և ժողովուրդը Հերքիւլէան, ոչ միայն երկաթեայ օղակներն յինք ձգելու գորութիւն ունի, այլ նաեւ իր գորութիւնը նոյն օղակաց հաղորդելու որք կարօղ կրլլան ուրիշ մարմիններ քաշելու, և հաճախ կը տեսնուի օղակաց շարք մը իրարմէ կախուած՝ որ մէկ մագնիսին գորութեամբը կեցած են»¹²: Այդ «օրէնքը», շարունակում է նա, գործում է նաև բանաստեղծ–ընթերցող շղթայում. «... ոչ թէ արհեստէն այլ աստուածային ներշնչութենէն իրենց հանճարէն» ընդունելով «Ստեղծելու գորութիւնն», բանաստեղծը մագնիսի նման ընթերցողին է հաղորդում «իւր արիւնը»:

Թ. Թերզյանը բանաստեղծին համեմատում է նաև մեղվի հետ, ով «ծաղկէ ծաղիկ թռչելով», ընդունում և ընթերցողին է փոխանցում իր «ոգւոյն ազդեցութիւնները»: Ըստ այդմ՝ «... քերդողը թեթև թռուցիկ նրւիրիկան էակ մըն է, – մեկնաբանում է նա, – եթէ աստուածութիւն մը՝ կամ քաղցր խանդ մը հոգւոյն մէջ չզեղանի չ'երգեր»: Նրանից հետո պետք է լինի «պաղ պատճառաբանութիւնը», քանզի «հագիւ ասոր հնազանդել ուզէ՝ կը ցրուին իր երգերը՝ իր պատգամներն»:

¹⁰ Ծ ա ն ա շ ե ա ն. 1973, 46:

¹¹ «Մասիս» (Կ. Պոլս), 1865, թիւ 705:

¹² «Մասիս», 1865, թիւ 705:

Հիշյալ հոգվածում Թ. Թերգյանի դատողությունները, ի վերջո, արտացոլում են էին նրա ուսմանտիկական աշխարհայեցողության, որը, իր հերթին, արդյունքն էր վենետիկյան շրջանի իր ուսուցիչների նախ և առաջ Ղևոնդ Ալիշանի և մյուս նշանավոր Մխիթարյան Հայրերի, ինչպես նաև համաշխարհային ուսմանտիպի հռչակավոր դեմքերի՝ Լամարտինի, Բայրոնի, Հյուգոյի և մյուսների ազդեցության: Ահա թե ինչու, միանգամայն բնական էր նրա այն տեսակետը, թե «Բանաստեղծ ըսելով չեմ հասկնար այն սակավաթիվ վարվուռն գրիչները որոնք իրենց ոգւոյն գաղտնիքները իբրեւ անգին գանձ մը աւանդեր են մարդկութեան, չեմ հասկնար նաեւ այն բիւրաւոր ոտանաւոր գրողները որոնք երգած ըլլալու համար կ'երգեն»: Իր համոզմամբ՝ բուն բանաստեղծությունը «այն գմայման վայրկեաններն» են, որ «քիչ չատ ամեն լուսաւորեալ մարդ», մինչև անգամ «անկիրթք ալ կունենան»: Այսինքն՝ «մարդուս բնութեան հետ խօսակցութիւն մը՝ որ շատ անգամ անթարգմանելի ըլլալով մեր սովորական լեզուովը նորանոր ձեւերով հանդուգն և անսովոր կը ներկայանայ մեզի»¹³: Վերջապէս, դիտարկումների այս շարքն ավարտվում է հափազանց տպավորիչ ընդհանրացնող մի ձևակերպմամբ՝ «Մարդկային սիրտը բանաստեղծութեան քնարն է, և յուրաքանչիւր կիրքերնիս անոր մէջմէկ թերերն»¹⁴:

Ըստ էության, ժամանակը՝ XIX դարի երկրորդ կեսի իրականությունն էր այդպիսին և Թ. Թերգյանը, իհարկե, միայնակ չէր: «Գրական ամբողջ երկու սերունդ ունինք, որոնց հոգեբանությունը շաղախված է այդ տարրով (ուսմանտիպով — Պ. Դ.)», — գրում է Հակոբ Օշականը, որը, ըստ նրա, «հասկանալի ու արդար տարազ» էր Ալիշանի, Դուբյանի, Պեչկովաչյանի, Թերգյանի, Ջերազի, Տեմիրճիպաչյանի և մի շարք այլ գրողների գործերի համար՝ «... թե՛ իբր ոգիի, թե՛ իբր արվեստի հանգանակ»¹⁵:

Բանաստեղծություն—գիտություն փոխհարաբերության մեջ Թ. Թերգյանի քննախույզ մտքի սկեռակետում է նաև բանականություն—զգացմունք առնչության պարզաբանումը: Պատժելով, մեկնաբանում է նա, «... մտաց թեւերովը բարձրագոյն գունդերու մէջ հափշտակուելով աստուածային ոգիքը կառավարող օրէնքներն կը տեսնէ, եւ տեղւոյ կամ ժամանակին վրայ սխալելով երկնավայել հասարակութիւն մը մեզի կը քարոզէ»¹⁶: Գյոթենն՝ «... հսկայագոր հանճար՝ բարձրանալով անդր՝ իվեր քան զՍահմանս ուր մեր կրից փոթորիկներն կը գոռան և կը ճայթին սուր հայեցուածք մը կարճակէ համագոյից մէջ, եւ արարածոց համակարգութենէն չլացած իրեն կը թուի թէ Տիեզերքը ոչ այլ ինչ է բայց միայն հաւիտենական լուսոյ մէկ աղոտ ճառագայթ մը ...»: Շարունակելով իր դատողությունները, նա ընդգծում է, որ գիտության և բանաստեղծության այս կարգի հսկաները միանգամայն ըմբռնելի են իր համար: Բայց կան նաև գիտական այլ խոչորագույն դեմքեր՝ Հոբս, Սպինոզա, որոնք «դժոխքներ պաղարեամբ կը քրքրեն ընկերութեան հիմունքը» կամ՝ Վոլտեր, որ «... զայրացուցիչ փոփոխամտութեամբ եւ հեզնութեան ներողամտութեամբ նոր կրօնք մը կը վարդապետէ՝ իր ամէնէն նկուն հակառակորդներն ոտնակոխ ընելով»: Այդպիսիների նկատմամբ, խոստովանում է, թե «... առանց իրենց հանճարն

¹³ «Մասիս», 1865, թիւ 705:

¹⁴ «Մասիս», 1865, թիւ 706:

¹⁵ Օ շ ա կ ա ն. 1979, 438–439:

¹⁶ «Մասիս», 1865, թիւ 712:

ուրանալու, չեմ գիտեր թե՛ իրենց քարոզած ճշմարտություններէն որն ընդունիմ ...»։ Բանն այն է, որ Թերզյանի վերապաց մտքին խորթ էր պնդումը, թե «... մենք ոչ այլ ինչ ենք վերջապէս, բայց եթէ մտածող մեքենաներ»։ Այդ դեպքում «... մեզմէ ո՞վ չ'ուզեր քերթողաց քաղցրամրմունջ ցնորքներով օրորուիլ, — բացականչում է նա, — զոր մեր սիրտը կը դաւանի հակառակ մեր գայթիգայթ բանականութեանը»։ Որովհետեւ նա միանգամայն համոզված էր՝ «եթէ բանականութիւնը աստուածապարգեւ է՝ միթէ զգացմունքը նոյնպէս չէ՞»։

Վերջապէս, Թովմաս Թերզյանի վերը բերված բոլոր վերլուծությունները հանգում են նրա մտքին յուրահատուկ հետևյալ աֆորիստիկ ձևակերպմանը. «Բան մը չկայ որ այնպէս զմարդ աստուածային ընէ, կամ Աստուծոյ մը շունչն ըլլալինս հայտնէ՝ որչափ բանաստեղծութիւնը։ Աստուած ոչնչին նայելով տիեզերք մը ստեղծեց, մարդս այն տիեզերաց տեսնելէն զմայլած նորանոր տիեզերքներ կ'ստեղծէ»¹⁷։

Բանաստեղծը

Թովմաս Թերզյանն իր ստեղծագործական ճանապարհն սկսել է քնարերգությամբ։ Առաջին ոտանավորները՝ «Մանուկն ու վտակ», «Լերինք», «Մահ Ահարոնի», տպագրվել են 1856 թ. «Բազմավեպ» հանդեսում¹⁸։ Թ. Թերզյանը կենդանության օրոք բանաստեղծական որևէ ժողովածու չի հրատարակել։ Գր. Զոհրապը յուրօրինակ մեկնաբանություն է տվել այդ խնդրին՝ գրելով, որ նա պարզապէս անփութ է եղել «հոս հոն ցիրուցան» իր քերթվածները «ժողվելու, հավաքելու», ի մի բերելու գործում։ Ըստ Զոհրապի, «Իր քնարը ունկնդիրներու համար չէ որ կը մրմնջէ. այլ գլխաւորապէս իրեն համար ու յետոյ այն մտերիմներուն, որոնք «ստունէն» են և ոչ փողոցը հանդիպած օտարականներ»։ «Այս է պատճառը, — եզրակացնում է նա, — որ չէ ամփոփած իր քերթուածները հատորի մը մէջ, հետոյ խորհած է, թերեւս իրաւամբ, թէ պէտք է գանոնք թողուլ ամենքն ալ իրենց տեղը ու իրենց ատենին»¹⁹։

Փորձելով բնութագրել բնության, սիրո, իմաստասիրության, կրոնական և կենսական այլ թեմաների նվիրված Թերզյանի քերթվածների յուրահատկությունները՝ արձակագիր Օննիկ Զիֆթե-Սարաֆը նախևառաջ նշում է նրա «գերազանց գեղապաշտ» լինելը, հոգով ու մտքով նվիրվածությունը «աղուորին, մաքուրին, ազնիւին»։ Նաև՝ լեզվական ճոխությունն ու հմտությունը։ Մի խոսքով՝ «բանաստեղծ բառին լայն առումով», «ներշնչուած առաքեալ»²⁰։ Իսկ Ռ. Սամիկյանը նրան համեմատում է «վարպետ քանդակագործի» հետ, որ «նիւթին անօսրացումներովը, ներշնչման փետուրներովը և արուեստին նրբերանգություններովը կը հիւսէ, կը կերտէ իր գործը»²¹։

Թ. Թերզյանի բանաստեղծությունները ևս զերծ չեն արևմտյան գրական աշխարհում ընթացող զարգացումների՝ հատկապէս նշանավոր ռոմանտիկ բանաստեղծների՝ Լամարտինի, Մյուսէի, Հյուգոյի և այլոց ազդեցությունից։ Այն

¹⁷ «Մասիս», 1865, թիւ 712:

¹⁸ Տես՝ «Բազմավեպ» (Վենետիկ), 1856, թիւ 5, 72, թիւ 24, 376:

¹⁹ «Մասիս», 1892, թիւ 3971, 260:

²⁰ Զիֆթե-Սարաֆ. 1901, թիւ 1367:

²¹ Սամիկյան. 1909, թիւ 6, 135:

վերապահություններ, սակայն, որ այդ ազդեցությունները, ինչպես նշում է պոետական մանկավարժ, թատերագետ Սմբատ Դավթյանը, ամենևին էլ չեն խաթարում բանաստեղծի յուրօրինակ անհատական էությունը. «Թէրգեան ունի այնպիսի շնորհ մը, հրապոյր մը, որ իր քնարերգութիւններուն յատուկ են: Վարժ միտք մը ինքնին կրնայ ճանչնալ Թէրգեանի գրչին մէկ արտադրութիւնը՝ եթէ ստորագրուած ալ չըլլայ»²²: «Թէրգեան հոգիով ալ, զգացումով ալ, արտայայտութիւնով ալ բանաստեղծ է, – գրում է նա, – ի վրէժն է որ անիկա միշտ հաւատարիմ գտնուած է իր սիրոյն մէջ «Առ մուսայն » որուն կ'ըսէ:

Զատեղաց բոյս – անըսպառ գանձ
Զծաղկունըս բոլոր տուէր դու ինձ ...

Այս երկու տողին մէջ խտացած կը գտնենք Թէրգեանին ալ, ինչպէս ամէն ճշմարիտ բանաստեղծի նկարագիրը»²³: Իսկ, ահա, Մ. Ճանաչյանի համար ամենից կարևորն այն է, որ «Թէրգեանի քնարը կը դաչի համամարդկային լարերուն: Մարդկային հոգւոյն տառապանքը, ցաւն ու սէրը կը կազմեն բանաստեղծութեանց գլխաւոր նիւթը»²⁴:

1909 թ. Թ. Թերգյանի մահվան կապակցությամբ հրապարակած իր խոսքում Արշակ Չոպանյանը մտահոգություն էր հայտնում այն մասին, որ սիրելի բանաստեղծի «...քերթուածները երբեք հատորով հրատարակած չըլլալով, քիչերը ծանօթ են իր բանաստեղծական գործին ամբողջական անգին արժէքին»: Միաժամանակ, համոզված լինելով, որ բանաստեղծի բուն վերլուծումն ու գնահատությունը «... կարելի պիտի ըլլայ միայն՝ երբ հրատարակուի ամբողջական հաւաքածուն Թէրգեանի քերթուածներուն, որուն անհամբեր կը սպասէ Հայտնութիւնը»²⁵: Իրողությունն այն է, սակայն, որ այդ երազանքը հնարավոր եղավ իրականացնել գրողի մահից երկու տասնամյակ անց միայն և հենց իր՝ Չոպանյանի ջանքերով: Թ. Թերգյանի «Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ»-ն նա կազմել և հրատարակել է 1929 թ. Վենետիկում 2 հատորով և իր ծավալուն առաջաբանով:

Թատերագիրը

Թովմաս Թերգյանը նաև արևմտահայ թատերական շարժման հիմնադիրներից է: 1860-ական թվականներին նախ թատերական ներկայացումներ է կազմակերպել «Խնազիւղի մեծամեծներու տուններուն մէջ», ապա նաև արքունի ճարտարապետ Հակոբ Պալյանի հովանավորությամբ ստեղծած նշանավոր դրամատիկ երկերից («Սանդուխտ», «Արշակ Բ») հետո, ստեղծել է իր՝ «Հայկական թատրոն»-ը: Հ. Պալյանի հովանավորությամբ 1869 թ. մեկնել է Փարիզ, որտեղ Արևելքում ֆրանսերեն լեզուն ու մշակույթը տարածելու համար պարզեցատրվել է ֆրանսիական կառավարության «Ակադեմիական արմավենի» շքանշանով²⁶:

²² Դ ավթյան. 1903, թիւ 22, 510:

²³ Դ ավթյան. 1903, թիւ 22, 509:

²⁴ Ճ ան ա չ ե ա ն. 1973, 61:

²⁵ «Անահիտ» (Փարիզ), 1909, թիւ 1–2, 37:

²⁶ Ա ս ա տ ը յ ա ն. 2006, 24:

Թ. Թերզյանի բնատուր տաղանդը՝ Մխիթարյանների և մանավանդ Ղ. Ալի-չանի ազդեցությամբ, նախևառաջ դրսևորվել է հայոց ազգային պատմական թեմատիկայով գրված թատերգություններում («Սանդուխտ», «Արշակ Բ», «Խոսրով Բ» և այլն)։ Գրականագետ Սուրեն Շտիկյանի հավաստմամբ՝ «... հայտնությունը հայրենասիրական ոգով դաստիարակելու համար» հայ հեղինակները «եվրոպական կլասիցիստների նման, անդրադարձան պատմական անցյալին և այնտեղից դուրս կոչեցին հայոց փառքը կազմող ռազմիկներին, դավատեցին նրանց սխրանքները հայրենիքի համար, դատապարտեցին դավաճանությունը, հայրենադավությունը»²⁷։ Թերզյանի հիշյալ թատերգությունները՝ հատկապես առաջին երկուսը, մի քանի հաջող բեմադրություններ ունեցան Կ. Պոլսում և այլուր, միանգամից հնչեցնելով նրա անունը գրական նոր տաղանդների շարքում։ Ընդ որում «Արշակ Բ» ողբերգությամբ Թ. Թերզյանի անունը հռչակվեց նաև որպես Տիգրան Չուխաճյանի համանուն հայկական առաջին օպերայի լիբրետոյի հեղինակ։ «Արշակ Բ»-ի լիբրետոն կառուցված է հմտորեն, թատրոնի պահանջներին լիովին համապատասխան և հազեցած է խոր դրամատիզմով, — գրում է երաժշտագետ Աննա Ասատրյանը։ — Միևնույն ժամանակ այն զերծ է ձգձգվածությունից, կազմված է սեղմ, առանց ավելորդաբանությունների, ինտրիգը զարգանում է աստիճանաբար՝ առաջ բերելով մեծ յարվածություն»²⁸։ Ինչ վերաբերում է օպերային, ապա «Չուխաճյանը թեմայի մեկնաբանման հարցում դրսևորել է մեծ խորություն և ամբողջականություն։ Թերզյանի լիբրետոյի հիմնական գաղափարը Չուխաճյանն օպերայում մարմնավորել է գեղարվեստական ընդհանրացման մեծ ուժով պատմական դրաման կոմպոզիտորի ջանքերով դարձել է օպերային արվեստի ուշագրավ ստեղծագործություն»²⁹։ Բարձր գնահատելով հատկապես «Սանդուխտ» ողբերգությունը, Ա. Արփիարյանը նշում է, որ այն գրված է «Ալիչանի «Կուսանք հայոց նոր շուշան // Տեսէք ի դաշտ Շավարշան» համբաւաւոր քերթուածին ներշնչութեամբ ...», որ «չատ տարիներ թէ՛ Պոլիս և թէ՛ Կովկաս հայ ժողովուրդը հրճուեցուց»³⁰։ 1880-ական թվականների վերջերից, համիդյան հայահալած քաղաքականության հետևանքով, Արևմտյան Հայաստանում հայերեն լեզվով ներկայացումներն արգելվելուց հետո, չուրջ երկու տասնամյակ անց՝ 1908-ին, այն մեծ հաջողությամբ նորից բեմադրվեց Վահրամ Փափագյանի ջանքերով։

Թ. Թերզյանը մեկն էր այն նախանձախնդիր դեմքերից, որ Մ. Պեչիկվաշյանի, Ս. Հեքիմյանի, Նար Պեյի հետ «... ամէն բանէ առաջ խորհած են թատրոն հիմնել հայոց մէջ»³¹, ընդգծում է Ա. Չոպանյանը։ Ընդ որում, ըստ թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանի, «Թատրոնի հիմնադիրները ջանացել են ետ չմնալ ժամանակի եվրոպական թատերական կյանքից, ազգայնացնել իտալական ու ֆրանսիական թատրոնների խաղացանկը։ Տեղի է ունենում և՛ անցյալ, և՛ արդիական արժեքների յուրացում»³²։ Բնական է, որ Թ. Թերզյանը ևս ինքնու-

²⁷ Շ տ ի կ յ ա ն. 1973, 27:

²⁸ Ա ս ա տ ը յ ա ն. 2006, 58:

²⁹ Ա ս ա տ ը յ ա ն. 2006, 112:

³⁰ Ա ր փ ի ար ե ա ն. 1943, 224:

³¹ «Անահիտ», 1899, թիւ 11, 324:

³² Հ ո վ հ ա ն ի ս յ ա ն. 1996, 88:

Историко-филологический журнал • Историко-филологический журнал • 2025 № 3

Դատերք Կաստալի
Եւ Հարսունք Գողթան
Քեզ թագ կրկնակի
Հիւսեցին Օտեան»³⁶:

³⁷ «Շիրակ», 1909, թիվ 6, 134:

Հատ մը, դրուագները Թաստոյի «Երուսաղէմ Ազատեալ» էն, Կէօթէի «Փառաւ»-ը, Քարմէն Սիւվայի «Աստրա» վէպը ...»³⁸:

Եզրակացութիւն

Մեծ է Թովմաս Թերզյանի ներդրումը XIX դարի երկրորդ կեսի արեւմտահայ գրականութեան, արվեստի, մշակութիւնի և կրթութեան զարգացման գործում: Նրա անվան հետ է կապւում Եվրոպայում ծայր առած մանկավարժական առաջավոր գաղափարների տարածումը արեւմտահայ իրականութեան մեջ: Նա է սկզբնավորել «գրականութիւն» և «գեղեցկագիտութիւն» առարկաների դասավանդումը արեւմտահայ դպրոցներում: Մի քանի տասնամյակի մանկավարժական գործունեութեան ընթացքում նրան աշակերտել են հետագայում ազգային, գրական, հրապարակագրական մի շարք հայտնի դեմքեր (Ե. Տեմիրճիպաշյան, Մ. Չերազ, Գր. Զոհրապ, Ա. Չոպանյան և այլք):

Թ. Թերզյանի գեղագիտական հայացքներն արտացոլումն էին վենետիկյան շրջանի իր նշանավոր ուսուցիչների և առաջին հերթին, Ղ. Ալիշանի ազդեցութեամբ ձևավորված նրա ուսման տիպական աշխարհայեցողութեան:

Թերզյանը նաև ինքնատիպ բանաստեղծ ու թարգմանիչ էր: Ազգայինից մինչև համամարդկային ոլորտներն ընդգրկող նրա քերթվածները ևս գերծ չեն արևմտյան գրական աշխարհում ընթացող զարգացումների հատկապես նշանավոր ուսման տիպների (Լամարտին, Մյուսե, Հյուգո) ազդեցութեանից իհարկե, պահպանելով սեփական անհատականութեան կնիքը:

Թ. Թերզյանը արեւմտահայ թատերական շարժման հիմնադիրներից է: Հեղինակել է երեք տասնյակից ավելի թատերական գործեր: Այդ ասպարեզում ունեցած նրա բնատուր տաղանդն ամենից ավելի դրսևորվել է հայոց ազգային պատմական թեմատիկայով գրված «Սանդուխտ» և «Արշակ Բ» թատերգութիւններում, որոնք մի շարք հաջող բեմադրութիւններ են ունեցել Կ. Պոլսում և այլուր: միանգամից հնչեցնելով նրա անունը գրական նոր սերնդի տաղանդների շարքում: Նա արտակարգ բարձր է գնահատել Վ. Շեքսպիրի հանճարը և պատահական չէ, որ «Սանդուխտ» ողբերգութիւնը համեմատվել է «Լիր Արքայի» հետ: «Արշակ Բ» ողբերգութեամբ Թ. Թերզյանը հռչակվել է նաև որպես Տիգրան Զուխաճյանի համանուն հայկական առաջին օպերայի լիբրետոյի հեղինակ:

Պետրոս Դեմիրճյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականութեան ինստիտուտի հայ նոր գրականութեան բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրութիւնները՝ դասական և ժամանակակից հայ գրականութիւն: Հեղինակ է 4 մենագրութեան և 200-ից ավելի հոդվածների:
ORCID:0009-0003-6265-1421. pdemirchyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ասատրյան Ա. 2006, «Արշակ Բ». հայոց անդրանիկ օպերան, Երևան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հրատ., 268 էջ:

Արփիարեան Ա. 1943, Պատմութիւն ժժ դարու թուրքոյ հայոց գրականութեան, Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 232 էջ:

³⁸ Ժ ա ն ա չ ե ա ն. 1973, 61:

- Արփիարեան Տ. 1908, Գ. Զօհրապ (քսան տարեկան հասակին). – «Լոյս» (Կ. Պոլիս), թիւ 22, էջ 730–735:
- Դավթեան Ս. 1903, Թովմաս Թերզեան (Գրական ուսումնասիրութիւն). – «Արևելեան մամուլ» (Զմյուռնիա), թիւ 22, էջ 509–513:
- Զօհրապ Գր. 1892, Թովմաս Թերզեան. – «Մասիս» (Կ. Պոլիս), թիւ 3971, էջ 260–261:
- Թերզիբաշյան Վ. 1959, Հայ դրամատուրգիայի պատմություն (1668–1868), Երևան, «Հայպետհրատ», 486 էջ:
- Թերզեան Թ. 1856, «Մանուկն և վտակ», «Լերինք», «Մահ Ահարոնի». – «Բազմավէպ» (Վենետիկ), թիվ 5, 72, թիվ 24, 376:
- Թերզեան Թ. 1865, Բանաստեղծութիւն. – «Մասիս» (Կ. Պոլիս), թիւ 705, 706, 710, 712:
- Թերզեան Թ. 1929, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, հ. Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 455 էջ:
- Թերզյան. 1992, Երկեր, Երևան, «Նաիրի», 256 էջ:
- Հովհաննիսյան Հ. 1996, Հայ թատրոնի պատմություն, 19-րդ դար, Երևան, «Նաիրի», 552 էջ:
- Ճանաչեան Մ. 1973, Հայ գրականութեան նոր շրջանի համառօտ պատմութիւն (1701–1920), Վենետիկ – Ս. Ղազար, 401 էջ:
- Շտիկյան Ս. 1973, Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801–1850), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 352 էջ:
- Չիֆթէ-Սարաֆ Օ. 1901, Թովմաս Թերզեան (վայրկենական). – «Բիւզանդիոն» (Կ. Պոլիս), թիւ 1367:
- Զօպանեան Ա. 1899, Ռուսահայեր ու թրքահայեր. – «Անահիտ» (Փարիզ), թիւ 11, էջ 317–324:
- Զօպանեան Ա. 1909, Թովմաս Թերզեան. – «Անահիտ» (Փարիզ), թիւ 1–2, էջ 35–39:
- Սամիկեան Ռ. 1909, Թովմաս Թերզեան. – «Շիրակ» (Կ. Պոլիս), թիւ 6, էջ 132–139:
- Ստեփանյան Գ. 1962, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 522 էջ:
- Ստեփանյան Գ. 1973, Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, «Հայաստան», 382 էջ:
- Օշական Հ. 1979, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 488 էջ:

ТОВМАС ТЕРЗЯН: САМОБИТНЫЙ ПИСАТЕЛЬ, ЭСТЕТИК, ПЕДАГОГ

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Р е з ю м е

Ключевые слова: Товмас Терзян, педагог, поэт, драматург, эстетик, переводчик.

Товмас Терзян (1840–1909) – один из видных деятелей западноармянской интеллигенции второй половины XIX века. Получил образование в одном из известных армянских учебных заведений того времени – в венецианском колледже Мурат-Рафаэлян конгрегации Мхитаристов. В формировании его личности как носителя национальных и мировых ценностей

огромную роль сыграли известные педагоги Гевонд Алишан и Арсен Багратуни.

На протяжении нескольких десятилетий Т. Терзян занимался педагогической деятельностью в Константинополе. Многие из его воспитанников стали впоследствии видными деятелями армянской культуры.

В истории армянской литературы Товмас Терзян известен как поэт, драматург, стоявший у истоков создания национального театра, эстетик и талантливый переводчик.

Петрос Демирчян – д. филол. н., старший научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегамяна НАН РА. Научные интересы: классическая и современная армянская литература. Автор 4-х монографий и более 200 статей. ORCID:0009-0003-6265-1421. pdemirchyan@mail.ru

THOMAS TERZYAN: AN ORIGINAL WRITER, AESTHETE, TEACHER

PETROS DEMIRCHYAN

Summary

Keywords: Tovmas Terzyan, teacher, poet, playwright, aesthete, translator.

Thomas Terzyan (1840–1909) was one of the prominent figures of the Western Armenian intellectuals of the second half of the 19th century. He received his education at one of the renowned Armenian educational institutions of the time, the Murat-Raphaelian College of the Mekhitarist Order in Venice. Famous teachers Ghevond Alishan and Arsen Bagratuni played a great role in the formation of his personality as a bearer of national and universal values.

For several decades, T. Terzyan was engaged in teaching activities in Constantinople. Many of his students later became prominent figures in the Armenian culture.

In the history of Armenian literature, Tovmas Terzyan is known as a poet and a playwright who stood at the origins of the national theater, an aesthete, and a talented translator.

Petros Demirchyan – Doctor of Philological Sciences. Senior Researcher at the Department of Modern Armenian Literature of the Institute of Literature after M. Abeghian of NAS RA. Scientific interests: classical and modern Armenian literature. Author of 4 monographs and more than 200 articles. ORCID:0009-0003-6265-1421. pdemirchyan@mail.ru